# ՍԵՅՍՄԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ
# ԱՐԴՅՈՒՆՔԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՎԱՐԿԱՎՈՐՈՒՄ

**ԱԶԲ ՎԱՐԿ 3284-ARM(SF)**

ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

## ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ԵՎ

## ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ
**Հունիս 2022**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԱՄԱՐ......3

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ......4

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄՈՒՏՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ......7

ԸՍՏ ԾՐԱԳՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՖՈՆԴԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ......8

ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ......9

## ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԱՄԱՐ

Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի (ՀՏԶՀ) ղեկավարությունը պատասխանատու է 19.10.2015թ. կնքված ԱԶԲ Վարկ 3284-ARM(SF) Վարկային Համաձայնագրով ֆինանսավորվող (Վարկային Համաձայնագիր) "Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիր" (Ծրագիր) 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար, համաձայն Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՀՀՄՍԽ) կողմից հրապարակված «Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով» ՀՀՀՀՄ ստանդարտի (ՀՀՀՀՄ- դրամարկղային սկզբունք) և ԱԶԲ-ի Ծրագրերի Ֆինանսական Հաշվետվողականության և Աուդիտի Ձեռնարկի (ԱԶԲ Ուղեցույց):

Հատուկ նպատակներով ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ՀՏԶՀ-ի ղեկավարությունը պատասխանատու է.

- Հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճ ընտրության և կիրառման համար,
- Ներկայացնել տեղեկատվությունը, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, այնպես որ այն լինի արժանահավատ, համադրելի ու հասկանալի,
- Ներկայացնել լրացուցիչ անհրաժեշտ տեղեկատվություն 31.12.2021թ.-ի վերաբերյալ:

ՀՏԶՀ-ի ղեկավարությունը նաև պատասխանատու է.

- Մշակելու, ներդնելու ու պահպանելու ներքին հսկողության արդյունավետ համակարգ,
- Կատարելու հաշվապահական հաշվառման պատշաճ գրանցումներ, որոնք բավարար են ներկայացնելու ու պարզաբանելու գործարքները, ներառյալ ՎՀՑ-ների իրականացման հաշվետվությունները, և որոնք հնարավորություն են տալիս հիմնավորել, որ հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն ՀՀՀՀՄ-դրամարկղային սկզբունքի և ԱԶԲ ուղեցույցի,
- Ձեռնարկել հնարավոր միջոցներ Ծրագրի ակտիվների պահպանման նպատակով, և ապահովել, որ ֆոնդերն օգտագործվել են Վարկային Համաձայնագրում նշված պայմաններին և ԱԶԲ համապատասխան ուղեցույցներին համապատասխան` պատշաճ ուշադրություն դարձնելով տնտեսմանը և արդյունավետությանը, և միայն այն նպատակներով, որոնց համար հատկացվել են, և
- Դեպոզիտային հաշիվը վարել համաձայն Վարկային Համաձայնագրի պայմանների և ԱԶԲ-ի համապատասխան ուղեցույցների:
- Չգնել աշխատանքներ, ապրանքներ և ծառայություններ այն երկրներից, որոնք ԱԶԲ-ի անդամ չեն, և չկատարել ծախսումներ ԱԶԲ-ի Անվտանգության քաղաքականության հայտարարության Հավելված 5-ում նշված որևէ արգելված ներդրումային գործունեության համար:
- Կանխարգելել և բացահայտել խարդախությունը կամ այլ սխալները:

2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա հատուկ նպատակների ծրագրի ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են ՀՏԶՀ ղեկավարության կողմից 2022թ. հունիսի 21-ին:

**Արթուր Սողոմոնյան**
**Գործադիր տնօրեն**

**Լևոն Դուլյան**
**Գլխավոր ֆինանսիստ**

BDO

Հեռ. +37460 528899
էլ.փոստ՝ bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

ՀՀ, ք. Երևան
Դ. Անհաղթի 23/6, 6-րդ
հարկ, տարածք 7

# ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի ղեկավարությանը

***Կարծիք***

Մենք աուդիտի ենք ենթարկել 19.10.2015թ. կնքված ԱԶԲ Վարկ 3284-ARM(SF) Վարկային Համաձայնագրով (Վարկային Համաձայնագիր) ֆինանսավորվող և Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի (ՀՏԶՀ) կողմից իրականացվող "Սեյսմիկ Անվտանգության Բարելավման Ծրագրի" (Ծրագիր) հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 31.12.2021թ.-ին ավարտված տարվա դրամական միջոցների մուտքերի և վճարումների մասին հաշվետվությունը, ըստ ծրագրի բաղադրիչների ֆոնդերի օգտագործման մասին հաշվետվությունը, ինչպես նաև հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփը և այլ ծանոթագրությունները:

Մեր կարծիքով՝ հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ծրագրի 31.12.2021թ.-ին ավարտված տարվա դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն "Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով" Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտի (ՀՀՀՀՄՍ-դրամարկղային սկզբունք) և ԱԶԲ-ի Ծրագրերի Ֆինանսական Հաշվետվողականության և Աուդիտի Ձեռնարկի (ԱԶԲ Ուղեցույց):

***Կարծիքի հիմք***

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի և Երաշխավորման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ԱՈՒՄՍԽ) կողմից հրապարակված Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է սույն հաշվետվության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար պարբերությունում:
Մենք անկախ ենք Ծրագրից և ՀՏԶՀ-ից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոնների:
Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

***Հանգամանքի շեշտադրում – Դրամային միջոցների սկզբունքով հաշվետվությունների պատրաստում***

Առանց ձևափոխելու մեր կարծիքը, Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվություններին կից ծնթ. 2-ին, որտեղ ներկայացված է, որ այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են դրամային միջոցների սկզբունքով, որի պատճառով, այս հաշվետվությունները կարող են չհամապատասխանել այլ նպատակներով օգտագործման համար:

***Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար***

ՀՏԶՀ-ի ղեկավարությունը պատասխանատու է Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՀՀՍՄԽ) կողմից հրապարակված ՀՀՀՀՄՍ-դրամարկղային սկզբունքի և ԱԶԲ Ուղեցույցի համաձայն հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար, և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ղեկավարության կարծիքով, անհրաժեշտ է՝ խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

BDO

Հեռ. +37460 528899
Էլ.փոստ` bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

ՀՀ, ք. Երևան
Դ. Անհաղթի 23/6, 5-րդ
հարկ, տարածք 7

***Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար***

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած լինելու հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացրած աուդիտը միշտ կհայտնաբերի բոլոր էական խեղաթյուրումները, երբ նրանք առկա են: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք՝ առանձին կամ միասին վերցրած, կազդեն հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություններ և պահպանում մասնագիտական կասկածամտություն:

Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ՝ Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների և դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Մենք, ի թիվս այլ հարցերի, ղեկավարությանը տեղեկացնում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Հեռ.՝ +37460 528899
Էլ.փոստ՝ bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

ՀՀ, ք. Երևան
Դ. Անհաղթի 23/6, 5-րդ
հարկ, տարածք 7

**Եզրակացություն իրավական այլ պահանջներին համապատասխանելու վերաբերյալ**

Վարկային Համաձայնագրերի պահանջների պահպանման նպատակով, ՀՏԶՀ-ի ղեկավարությունը պետք է ապահովի, որ.

1. Ֆոնդերն օգտագործվել են Հայաստանի Հանրապետության և Ասիական Զարգացման Բանկի (ԱԶԲ) միջև կնքված Վարկային Համաձայնագրում նշված պայմաններին և ԱԶԲ-ի համապատասխան ուղեցույցներին համապատասխան՝ պատշաճ ուշադրություն դարձնելով տնտեսմանը և արդյունավետությանը, և միայն այն նպատակներով, որոնց համար հատկացվել են:
2. Ծրագրային ծախսերը, ներառյալ՝ վճարման հիմք հանդիսացող ցուցանիշների իրականացման հաշվետվությանը վերաբերող, ապահովված են համապատասխան հիմնավորող փաստաթղթերով, գրանցումներով և հաշիվներով: ՀՏԶՀ-ի կողմից հաշվետու ժամանակաշրջանի վերաբերյալ ներկայացված համապատասխան հաշվետվությունները համապատասխանում են հաշվապահական գրանցումներին:
3. Դեպոզիտային հաշիվը վարվել է համաձայն Վարկային Համաձայնագրի պայմանների և ԱԶԲ-ի համապատասխան ուղեցույցների:
4. Չգնել աշխատանքներ, ապրանքներ և ծառայություններ այն երկրներից, որոնք ԱԶԲ-ի անդամ չեն, և չկատարել ծախսումներ ԱԶԲ-ի Անվտանգության քաղաքականության հայտարարության Հավելված 5-ում նշված որևէ արգելված ներդրումային գործունեության համար:

Մեր կարծիքով, 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում ՀՏԶՀ-ի ղեկավարությունը պահպանել է նշված պահանջները, ներառյալ նշված 4-րդ կետի պահանջը Ծրագրի սկզբից մինչև հաշվետու ամսաթիվը:

“Բի-Դի-Օ Արմենիա” ՓԲԸ
21 հունիսի, 2022թ.

Վահագն Սահակյան
Տնօրեն

Գնել Խաչատրյան
Աուդիտի ղեկավար

# ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄՈՒՏՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

*Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիր - արդյունքի վրա հիմնված վարկավորում*
*ԱԶԲ վարկ 3284-ARM(SF)*
*2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ*
*ԱՄՆ դոլար*

| Հոդվածներ | Ծնթ. | Փաստացի | | | | Նախատեսված | | Շեղում | | Նախնական պլան |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 31.12.2020 ավարտված տարի | Աճողական առ 31.12.2020 | 31.12.2021 ավարտված տարի | Աճողական առ 31.12.2021 | Աճողական առ 31.12.2020 | Աճողական առ 31.12.2021 | Աճողական առ 31.12.2020 | Աճողական առ 31.12.2021 | 31.12.2021 ավարտված տարի |
| **Դրամական միջոցների սկզբնական մնացորդ** | | **12,228,459** | - | **3,853,934** | - | | | | | |
| **Ֆոնդերի աղբյուրներ** | 8 | | | | | | | | | |
| ԱԶԲ վարկ 3284-ARM(SF) | | 835,297 | 29,193,466 | 16,675,331 | 45,868,797 | | | | | |
| ՀՀ Կառավարության համաֆինանսավորում | | 1,669,049 | 4,397,642 | 1,875,643 | 6,273,285 | | | | | |
| **Ընդամենը** | | **2,504,346** | **33,591,108** | **18,550,974** | **52,142,082** | | | | | |
| **Ֆոնդերի օգտագործում** | | | | | | | | | | |
| (1) Աշխատանքներ | | 9,377,093 | 23,829,596 | 10,551,680 | 34,381,276 | 25,247,258 | 35,289,801 | 1,417,662 | 908,525 | 7,897,142 |
| (2) Ապրանքներ | | - | 44,404 | - | 44,404 | 44,404 | 44,404 | - | - | - |
| (3) Խորհրդատուների ծառայություններ | | 497,578 | 1,516,792 | 581,341 | 2,098,133 | 1,634,350 | 2,164,880 | 117,558 | 66,747 | 951880 |
| (4) Գործառնական ծախսեր | | 162,484 | 796,173 | 198,880 | 995,053 | 838,460 | 1,032,540 | 42,287 | 37,487 | 236367 |
| (5) Հաշվարկված տոկոսներ | | 835,297 | 3,551,924 | 857,051 | 4,408,975 | 3,551,924 | 4,408,975 | - | - | 857,051 |
| **Ընդամենը** | | **10,872,452** | **29,738,889** | **12,188,952** | **41,927,841** | **31,316,396** | **42,940,600** | **1,577,507** | **1,012,759** | **9,942,440** |
| **Արտարժույթի տարբերությունից օգուտ/(կորուստ)** | | **(6,419)** | **1,715** | **3,210** | **4,925** | | | | | |
| **Դրամական միջոցների վերջնական մնացորդ** | **5** | **3,853,934** | **3,853,934** | **10,219,166** | **10,219,166** | | | | | |

*Ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի ղեկավարության կողմից 2022թ. հունիսի 21-ին: Կից ծանոթագրությունները ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասն են:*

**Արթուր Սողոմոնյան**
Գործադիր տնօրեն

**Լևոն Դույան**
Գլխավոր Ֆինանսիստ

## ԸՍՏ ԾՐԱԳՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՖՈՆԴԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

*Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիր - արդյունքի վրա հիմնված վարկավորում*
*ԱԶԲ վարկ 3284-ARM(SF)*
*2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ*
*ԱՄՆ դոլար*

| Ծրագրի բաղադրիչներ | Փաստացի | | | | Նախատեսված | | Շեղում | | Նախնական պլան |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 31.12.2020 ավարտված տարի | Աճողական առ 31.12.2020 | 31.12.2021 ավարտված տարի | Աճողական առ 31.12.2021 | Աճողական առ 31.12.2020 | Աճողական առ 31.12.2021 | Աճողական առ 31.12.2020 | Աճողական առ 31.12.2021 | 31.12.2021 ավարտված տարի |
| (ա) Դպրոցների շենքերի սեյսմակայունության բարձրացում | 9,874,671 | 25,390,792 | 11,133,021 | 36,523,813 | 26,926,012 | 37,499,085 | 1,535,220 | 975,272 | 8,849,022 |
| (բ) Սեյսմիկ աղետների պատրաստվածության և արձագանքման կարողությունների հզորացում | - | - | - | - | - | - | - | - | - |
| (գ) Սեյսմիկ աղետների ռիսկերի կառավարման և նվազեցման օժանդակող քաղաքականությունների և համակարգերի բարելավում | - | - | - | - | - | - | - | - | - |
| (դ) Ծրագրի կատարման և իրականացման կարողության բարձրացում | 162,484 | 796,173 | 198,880 | 995,053 | 838,460 | 1,032,540 | 42,287 | 37,487 | 236,367 |
| (ե) Հաշվարկված տոկոսներ | 835,297 | 3,551,924 | 857,051 | 4,408,975 | 3,551,924 | 4,408,975 | - | - | 857,051 |
| **Ընդամենը** | **10,872,452** | **29,738,889** | **12,188,952** | **41,927,841** | **31,316,396** | **42,940,600** | **1,577,507** | **1,012,759** | **9,942,440** |

*Ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի ղեկավարության կողմից 2022թ. հունիսի 21-ին: Կից ծանոթագրությունները ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասն են:*

**Արթուր Սողոմոնյան**
Գործադիր տնօրեն

**Լևոն Դույան**
Գլխավոր Ֆինանսիստ

## ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիր - արդյունքի վրա հիմնված վարկավորում*
*ԱԶԲ վարկ 3284-ARM(SF)*
*2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ*

### 1. Ընդհանուր տեղեկություններ

#### *1.1. Ծրագրի ֆինանսավորումը*

Համաձայն 2015թ. հոկտեմբերի 19-ին Հայաստանի Հանրապետության և Ասիական Զարգացման Բանկի (ԱԶԲ) միջև կնքված 3284-ARM(SF) վարկային համաձայնագրի՝ ԱԶԲ-ն Հայաստանի Հանրապետությանն է տրամադրել 63,259,000 SDR (Հատուկ Փոխարկման Իրավունք) գումար:
Վարկի վճարման արժույթը՝ ԱՄՆ դոլարն է (USD).

Վարկը տրամադրվել է իրականացնելու «Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիր-արդյունքի վրա հիմնված վարկավորումը» (Ծրագիր, ՍԱԲԾ):
Վարկային համաձայնագիրը ուժի մեջ է մտել 22.12.2015թ.-ին:

Ծրագիրը նախատեսվում էր ավարտել մինչև 2020թ. նոյեմբերի 30-ը, իսկ ԱԶԲ 3284-ARM(SF) վարկի ֆինանսավորման ավարտ էր սահմանված 2021թ.-ի մայիսի 31-ը: 2018թ.-ին Ծրագրի ավարտի ժամկետը վերանայվել է և երկարացվել մինչև 2024թ. մայիսի 31-ը: 2022թ. ապրիլին ծրագրի ավարտի ժամկետը վերանայվել է և երկարացվել՝ մինչև 2026թ. մայիսի 31-ը:

#### *1.2 Ծրագրի նպատակը*

Ծրագրի նպատակն է աջակցել ՍԱԲԾ-ի իրականացմանը՝ մեծացնելով դրանում սեյսմիկ կայուն դպրոցական շենքերի ծածկույթը:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ մասերից.
(ա) Դպրոցների շենքերի սեյսմակայունության բարձրացում:
(բ) Սեյսմիկ աղետների պատրաստվածության և արձագանքման կարողությունների հզորացում:
(գ) Սեյսմիկ աղետների ռիսկերի կառավարման և նվազեցման օժանդակող քաղաքականությունների և համակարգերի բարելավում:
(դ) Ծրագրի կատարման և իրականացման կարողության բարձրացում:

#### *1.3 Վճարման հիմք հանդիսացող ցուցանիշներ («ՎՀՑ»)*

Վարկի գումարները հասանելի են հատկացման ՎՀՑ-ի համապատասխան ցուցանիշների բավարարման դեպքում: ՎՀՑ-ների իրականացման վերաբերյալ բավարարող ապացույցները պետք է ներկայացվեն ԱԶԲ-ին՝ օժանդակելու առհանման դիմումները:
Վարկային հաշվից հատկացումները կարող են կատարվել ՎՀՑ-ի համապատասխան ցուցանիշները բավարարելու դեպքում մինչև Վարկային Համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝ 22.12.2015թ., բայց ոչ ավելի վաղ, քան 19.10.2014թ.-ը:

ՎՀՑ-ների թարմացված ժամանակացույցը ներկայացված է ներքո:

| ՎՀՑ # | Ցուցանիշներ | Ընդամենը | Նախնա-կան արդյունք | 2016թ. | 2017թ. | 2018թ. | 2019թ. | 2020թ. | 2021թ. | 2022թ. | 2023թ. | 2024թ. | 2025թ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | SDR | SDR | SDR | SDR | SDR | SDR | SDR | SDR | SDR | SDR | SDR | SDR |
| ՎՀՑ 1 | Սեյսմիկ անվտանգ դպրոցների շենքերի ծածկույթն ավելացել է | 18,514,000 | - | - | - | - | - | - | - | 7,363,000 | 4,646,000 | 5,363,000 | 1,142,000 |
| ՎՀՑ 2 | Դպրոցական շենքերի սեյսմիկ դիմադրողա-կանությունը մեծացել է | 34,382,000 | 2,144,000 | - | - | - | - | 9,221,000 | - | 6,790,000 | 9,150,000 | 6,077,000 | 1,000,000 |
| ՎՀՑ 3 | Սեյսմիկ աղետների պատրաստվածության և արձագանքման կարողու-թյունները հզորացվել են | 3,073,000 | - | 1,072,000 | - | - | - | 786,500 | - | - | 715,000 | 358,000 | 141,500 |
| ՎՀՑ 4 | Սեյսմիկ աղետների ռիսկերի կառավարմանը և ռիսկերի նվազեցմանն աջակցող քաղաքականու-թյունները և համակարգե-րը բարելավվել են | 1,929,000 | 643,000 | - | 643,000 | 643,000 | - | - | - | - | - | - | - |
| ՎՀՑ 5 | Սեյսմիկ անվտանգության ներդրումային Ծրագրի կատարման և իրականացման կարողությունները հզորացվել են | 1,858,000 | 357,000 | 643,000 | - | 858,000 | - | - | - | - | - | - | - |
| **Ընդամենը** | | **59,756,000** | **3,144,000** | **1,715,000** | **643,000** | **1,501,000** | - | **10,007,500** | - | **14,153,000** | **14,511,000** | **11,798,000** | **2,283,500** |
| Չաշվարկված տոկոսներ | | 3,503,000 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| **Ընդամենը** | | **63,259,000** | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |

## *1.4 Բյուջե*

Ծրագիրը ֆինանսավորվում է.

- ԱԶԲ 3284-ARM(SF) վարկով,
- ՀՀ Կառավարության համաֆինանսավորմամբ (հարկերի վճարում):

| Ծախսային հոդված | ԱԶԲ 3284-ARM(SF) վարկ | | ՀՀ Կառավարության համաֆինան-սավորում | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| | SDR | USD համարժեք (ա) | USD համարժեք (բ) | USD |
| (1) Աշխատանքներ | 47,208,000 | 65,949,482 | 14,604,574 | 80,554,056 |
| (2) Ապրանքներ | 4,183,000 | 5,843,643 | 1,294,080 | 7,137,723 |
| (3) Խորհրդատուների ծառայություններ | 6,680,000 | 9,331,947 | 2,066,568 | 11,398,515 |
| (4)Գործառնական ծախսեր | 1,685,000 | 2,353,942 | 521,283 | 2,875,225 |
| (5) Ծրագրի իրականացման ընթացքում հաշվարկված տոկոսներ | 3,503,000 | 4,892,891 | - | 4,892,891 |
| Ընդամենը | **63,259,000** | **88,371,905** | **18,486,505** | **106,858,410** |

(ա) SDR-ով արտահայտված վարկի բյուջեի USD-ով համարժեքը հաշվարկվում է՝ USD-ով ստացված կուտակային ֆինանսավորմանը գումարելով չբաշխված ֆինանսավորման SDR-ի գումարների USD համարժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ: 31.12.2021թ. դրությամբ սահմանված SDR/USD փոխարժեքը կազմել է 1 SDR=1.39959 USD, (31.12.2020 – 1.44027 USD):
(բ) ՀՀ Կառավարության համաֆինանսավորման բյուջեն ճշգրտվել է՝ հիմք ընդունելով Վարկային Համաձայնագրի բյուջեի թարմացումը:

## *1.5 Ծրագրի իրականացում*

Ծրագիրը իրականացվում է Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի (ՀՏԶՀ) կողմից:

ՀՏԶՀ-ն իրականացնում է ծրագրեր՝ ուղղված

- բնակչության բարեկեցության մակարդակի բարձրացմանը՝ սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքների և հանրային ծառայությունների, աշխատանքի, ներդրումային գործունեության որակի և հասանելիության բարելավման միջոցով,
- ՀՀ-ի տարածաշրջանների ինստիտուցիոնալ և ֆինանսական հզորացմանը:

Հոգաբարձուների Խորհուրդը ՀՏԶՀ-ի բարձրագույն կառավարման մարմինն է:

ՀՏԶՀ-ի գրանցման հասցեն է՝ ՀՀ, Երևան, 0037, Կ. Ուլնեցու 31:

## 2. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ

### 2.1 Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում և ներկայացում

Ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՀՀՄՍԽ) կողմից հրապարակված «Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամային միջոցների սկզբունքով» Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների և ներկայացվել են ԱԶԲ Ուղեցույցի՝ «Ծրագրերի Ֆինանսական Հաշվետվողականություն և Աուդիտի Ձեռնարկ»-ի (մարտ 2015) համաձայն:
Այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

### 2.2 Հաշվապահական հաշվառման դրամային միջոցների սկզբունք

Այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել և ներկայացվել են՝ կիրառելով հաշվապահական հաշվառման դրամային միջոցների սկզբունքը:
Հաշվապահական հաշվառման դրամային միջոցների սկզբունքի կիրառման դեպքում գործարքները և այլ դեպքերը ճանաչվում են միայն այն դեպքում, երբ դրամական միջոցը կամ համարժեքը ստացվել է կամ վճարվել:
Դրամային միջոցների սկզբունքով պատրաստված ֆինանսական հաշվետվությունները տրամադրում են տեղեկատվություն ժամանակաշրջանում ստացված դրամական միջոցների, դրամական միջոցների օգտագործման ուղղությունների և հաշվետու ամսաթվի դրությամբ դրամական միջոցների մնացորդների վերաբերյալ:

### 2.3 Ներկայացման արժույթը

Այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը ԱՄՆ դոլարն է (USD):

### 2.4 Գործարքներ արտարժույթով

Արտարժույթը Ծրագրի ներկայացման արժույթից տարբերվող արժույթն է:

Ծրագրի բանկային հաշիվները վարվում են ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով:
Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի՝ գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով Որպես փոխարժեք ընդունվում է.

1) Մինչև 2021թ. մարտի 1-ը՝ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից հրապարակված գործարքի օրվա դրությամբ արտարժույթի նկատմամբ ֆունկցիոնալ արժույթի միջին փոխարժեքը:
2) 2021թ. մարտի 1-ից սկսած.
   - Մուտքերի համար՝ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված Գործարքի օրվա դրությամբ արտարժույթի առքի փոխարժեքը:

Ելքագրվող գումարների համար՝ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված գործաքրքի օրվա դրությամբ արտարժույթի վաճառքի փոխարժեքը:

### 2.5 Հարկեր

Ծրագրի շրջանակներում հարկերը վճարվում են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության ընդհանուր կարգով:

## 3. Յուրաքանչյուր ՎՀՑ-ի գծով ստացված միջոցների ամփոփ

*Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիր - արդյունքի վրա հիմնված վարկավորում*
*ԱԶԲ վարկ 3284-ARM(SF)*
*2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ*

| Դիմումի համար | Ամսա-թիվը | ՎՀՑ կանխավճար/ (կանխավճարի մարում) | Գրանցված հատուցումներ | | | | | Հաշվարկված տոկոսներ | Ընդամենը փաստաթղթավորված | Ընդամենը վճարված |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՎՀՑ1- Սեյսմիկ անվտանգ դպրոցների շենքերի ծածկույթն ավելացել է | ՎՀՑ2- Դպրոցական շենքերի սեյսմիկ դիմադրողականությունը մեծացել է | ՎՀՑ3-Սեյսմիկ աղետներին դիմակայելու և արձագանքելու կարողությունները հզորացվել են | ՎՀՑ4-Սեյսմիկ աղետների ռիսկերի կառավարումը և ռիսկերի նվազեցմանն աջակցող քաղաքականությունները և համակարգերը բարելավվել են | ՎՀՑ5-Սեյսմիկ անվտանգության ներդրումային Ծրագրի կատարման և իրականացման կարողությունները հզորացվել են | | | |
| | 15.05.2020 | - | - | - | - | - | - | 405,891 | 405,891 | 405,891 |
| | 15.11.2020 | - | - | - | - | - | - | 429,406 | 429,406 | 429,406 |
| **Ընդամենը 2020** | | **-** | **-** | **-** | **-** | **-** | **-** | **835,297** | **835,297** | **835,297** |
| **Աճողական առ 31.12.2020** | | **21,949,766** | | **-** | **1,457,673** | **874,332** | **1,359,770** | **3,551,924** | **7,243,699** | **29,193,465** |
| | 15.05.2021 | - | - | - | - | - | - | 409,364 | 409,364 | 409,364 |
| 00003 | 01.06.2021 | - | - | 3,097,372 | - | 1,393,384 | 1,239,527 | - | 5,730,283 | 5,730,283 |
| | 15.11.2021 | - | - | - | - | - | - | 447,687 | 447,687 | 447,687 |
| 00004 | 29.11.2021 | - | - | 9,639,858 | - | 448,139 | - | - | 10,087,997 | 10,087,997 |
| **Ընդամենը 2021** | | **-** | **-** | **12,737,230** | **-** | **1,841,523** | **1,239,527** | **857,051** | **16,675,332** | **16,675,332** |
| **Աճողական առ 31.12.2021** | | **21,949,766** | **-** | **12,737,230** | **1,457,673** | **2,715,855** | **2,599,297** | **4,408,975** | **23,919,031** | **45,868,797** |

## 4. Դեպոզիտային հաշվի հաշվետվություն

| | |
|---|---|
| Հաշվեհամար | 900000901281 |
| Բանկ | Կենտրոնական գանձապետարան |
| Հասցե | Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Մելիք Ադամյան փ. 1, |
| Արժույթ | ԱՄՆ դոլար |

| | ԱԶԲ վարկ 3284-ARM(SF) | |
|---|---|---|
| | 31.12.2020 ավարտված տարի | 31.12.2021 ավարտված տարի |
| **1. Սկզբնական մնացորդ** | 12,198,217 | 3,826,185 |
| 2. *Ավելացում.* Սկզբնական տարբերություն | 726 | 726 |
| 3. ԱԶԲ ֆոնդի կանխավճար/համալրում | - | 15,818,280 |
| 4. *Նվազեցում.* դեպոզիտային հաշվից վերադարձ ԱԶԲ-ին | - | - |
| **5. Դեպոզիտային հաշվին համալրված գումարը** | **12,198,943** | **19,645,191** |
| 6. Դեպոզիտային հաշվի վերջնական մնացորդն | 3,826,185 | 10,219,166 |
| 7. *Ավելացում.* վճարված ընդունելի ծախսերի գումար | 8,372,032 | 9,425,035 |
| 8. *Նվազեցում.* Ստացված տոկոսներ (եթե կրեդիտագրվել են դեպոզիտային հաշիվ) | - | - |
| **9. Ընդամենը հաշվառված համալրում** | **12,198,217** | **19,644,201** |
| 10. Վերջնական տարբերություն (5)-(9) | 726 | 990 |

## 5. Դրամական միջոցներ

| Հաշիվ | Բանկ | Արժույթ | 31.12.2020 ԱՄՆ դոլար | 31.12.2021 ԱՄՆ դոլար |
|---|---|---|---|---|
| Դեպոզիտային հաշիվ (ԱԶԲ վարկ 3284-ARM(SF)) | Գանձապետարան | ԱՄՆ դոլար | 3,826,185 | 10,219,166 |
| Կառավարություն | Գանձապետարան | ՀՀ դրամ | 27,749 | - |
| | | | 3,853,934 | 10,219,166 |

## 6. Ֆոնդեր

### *6.1. ԱԶԲ 3284-ARM(SF) վարկ*

| | 31.12.2020 ավարտված տարի ԱՄՆ դոլար | Կուտակային առ 31.12.2020թ. ԱՄՆ դոլար | 31.12.2021 ավարտված տարի ԱՄՆ դոլար | Կուտակային առ 31.12.2021թ. ԱՄՆ դոլար |
|---|---|---|---|---|
| ՎՀՑ Կանխավճար/(կանխավճարի մարում) | - | 21,949,766 | - | 21,949,766 |
| ՎՀՑ վճարում | - | 3,691,776 | 15,818,281 | 19,510,057 |
| Տոկոսի վճարում | 835,297 | 3,551,924 | 857,051 | 4,408,975 |
| **Ընդամենը** | **835,297** | **29,193,466** | **16,675,332** | **45,868,798** |
| Ֆինանսավորման բյուջե | | **89,934,710** | | **88,371,905** |
| Հատկացված ֆինանսավորման տոկոսը | | **32%** | | **52%** |

*6.2.22 Կառավարության համաֆինանսավորում*

| | 31.12.2020 ավարտված տարի ԱՄՆ դոլար | Կուտակային առ 31.12.2020թ. ԱՄՆ դոլար | 31.12.2021 ավարտված տարի ԱՄՆ դոլար | Կուտակային առ 31.12.2021թ. ԱՄՆ դոլար |
|---|---|---|---|---|
| Ներդրումներ դրամական միջոցներով | 1,669,049 | 4,397,642 | 1,875,643 | 6,273,285 |
| **Ընդամենը** | **1,669,049** | **4,397,642** | **1,875,643** | **6,273,285** |
| | | | | |
| Ֆինանսավորման բյուջե | | **18,813,428** | | **18,486,505** |
| Հատկացված ֆինանսավորման տոկոսը | | **23%** | | **34%** |

## 7. Դատական հայցեր

Հաշվետու ամսաթվի և այս ֆինանսական հաշվետվության հաստատման ամսաթվի դրությամբ Ծրագրի դեմ ներկայացված դատական հայցեր չկան:

## 8. ՎՀՑ-Ի իրականացման ընթացք

| ՎՀՑ# | ՎՀՑ-ի նկարագրություն | Տարի | ՎՀՑ-ի նպատակ | Իրականացման ընթացքը առ 31.12. 2021 | Համապատասխան հաստատման գործընթացը | Վարկի տեղաբաշխված գումարը (SDR) | Վարկի կուտակային հատկացված գումարը առ 31.12.2020 (SDR) | Հատկացման % |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| ՎՀՑ1 | Սեյսմիկ անվտանգ դպրոցների շենքերի ծածկույթն ավելացել է | 2022 | Առնվազն 1.6%-ով գերազանցում է բազային ցուցանիշին | | | 18,514,000 | - | - |
| | | 2023 | Առնվազն 2.6%-ով գերազանցում է բազային ցուցանիշին | | | | - | |
| | | 2024 | Առնվազն 4.5% -ով գերազանցում է բազային ցուցանիշին | | | | - | |
| | | 2025 | Առնվազն 5.3% -ով գերազանցում է բազային ցուցանիշին | | | | - | |
| ՎՀՑ2 | Դպրոցական շենքերի սեյսմիկ դիմադրողականությունը մեծացել է | Նախնական 2015 | 8 առաջնային դպրոցների նախագծումները ավարտված են և հաստատված | Իրականացվել և ներկայացվել է ԱՋԲ 21.05.2019թ.-ին | Ընդունվել է ԱՋԲ-ի կողմից 11.09.2019թ.-ին | 34,382,000 | 2,144,000 | 26% |
| | | 2020 | Դպրոցների քանակը գերազանցում է բազային քանակը 8-ով | Իրականացվել և ներկայացվել է ԱՋԲ 27.09.2021թ.-ին | Ընդունվել է ԱՋԲ-ի կողմից 13.10.2021թ.-ին | | 6,915,750 | |
| | | 2022 | Դպրոցների քանակը գերազանցում է բազային քանակը 15-ով | | | | - | |
| | | 2023 | Դպրոցների քանակը գերազանցում է բազային քանակը 24-ով | | | | - | |
| | | 2024 | Դպրոցների քանակը գերազանցում է բազային քանակը 40-ով | | | | - | |
| | | 2025 | Դպրոցների քանակը գերազանցում է բազային քանակը 46-ով | | | | - | |
| ՎՀՑ 3 | Սեյսմիկ աղետներին դիմակայելու և արձագանքելու կարողությունները հզորացվել են | 2016 | Առնվազն 8 համայնքներ ստանում են հանրային իրազեկում | Իրականացվել և ներկայացվել է ԱՋԲ 11.11.2016թ.-ին | Հաստատվել է ԱՋԲ-ի կողմից 29.11.2016թ.-ին | 3,073,000 | 1,072,000 | 35% |
| | | 2020 | Առնվազն 16 համայնքներ ստանում են հանրային իրազեկում | | | | - | |
| | | 2023 | Առնվազն 24 համայնքներ ստանում են հանրային իրազեկում | | | | - | |
| | | 2024 | Առնվազն 40 համայնքներ ստանում են հանրային իրազեկում | | | | - | |
| | | 2025 | Առնվազն 46 համայնքներ ստանում են հանրային իրազեկում | | | | - | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| ՎՀՑ 4 | Սեյսմիկ աղետների ռիսկերի կառավարմանը և ռիսկերի նվազեցմանն աջակցող քաղաքականությունները և համակարգերը բարելավվել են | **Նախնական 2015** | ՍԱԲԾ-ն հաստատված է | Իրականացվել և ներկայացվել է ԱՋԲ 11.11.2016թ.-ին | Հաստատվել է ԱՋԲ-ի կողմից 29.11.2016թ.-ին | 1,929,000 | 643,000 | 100% |
| | | 2017 | Դպրոցների սեյսմակայունության և արդիականացման միջազգային լավագույն փորձին համապատասխանող ուղեցույցը հաստատված է | Դպրոցների սեյսմակայունության և արդիականացման միջազգային լավագույն փորձին համապատասխանող ուղեցույցը վերանայված է ԱՋԲ տեխնիկական աջակցությամբ | Ընդունվել է ԱՋԲ-ի կողմից 11.11.2019թ.-ին | | 643,000 | |
| | | 2018 | Ազգային սեյսմավտանգային հավանական քարտեզը թարմացվել է: Դպրոցական շենքերի թարմացված և միջազգային ստանդարտների հետ ներդաշնակեցված շենքային կոդերը հաստատված են | Ազգային սեյսմավտանգային հավանական քարտեզը թարմացված է և հաստատված: Շենքային կոդերի թարմացումը ընթացքի մեջ է | Ընդունվել է ԱՋԲ-ի կողմից 11.09.2019թ.-ին | | 321,500 | |
| | | | | | Ընդունվել է ԱՋԲ-ի կողմից 13.10.2021թ.-ին | | 321,500 | |
| ՎՀՑ5 | Սեյսմիկ անվտանգության ներդրումային Ծրագրի կատարման և իրականացման կարողությունները հզորացվել են | **Նախնական 2015** | Առնվազն 11 լրացուցիչ աշխատակից ներգրավվել է ՀՏԶՀ-ում՝ Ծրագրի իրականացման համար | Իրականացվել և ներկայացվել է ԱՋԲ 11.11.2016թ.-ին | Հաստատվել է ԱՋԲ-ի կողմից 29.11.2016թ.-ին | 1,858,000 | 357,000 | 100% |
| | | 2016 | Մրցութային փաստաթղթերի նմուշները պատրաստված են, ՀՏԶՀ –ի ղեկավար ձեռնարկը թարմացված է, Ծրագրի մոնիթորինգի և գնահատման համակարգերը հաստատված են | Պատրաստվել է ՀՏԶՀ-ի կողմից և ներկայացվել է ԱՋԲ 2016թ. նոյեմբերին | Ընդունվել է ԱՋԲ-ի կողմից 29.11.2016թ.-ին | | 643,000 | |
| | | 2018 | Ծրագրի իրականացման համար առնվազն 30 աշխատակիցներ, որոնցից առնվազն 40%-ը կանայք են | Ուսուցումներ են կազմակերպվել 30 մասնագետների համար, որոնք ներառված են Ծրագրի իրագործման աշխատանքներում Իրականացվել և ներկայացվել է ԱՋԲ 21.05.2019թ.-ին | Ընդունվել է ԱՋԲ-ի կողմից 11.09.2019թ.-ին | | 858,000 | |
| **Ընդամենը** | | | | | | **59,756,000** | **13,918,750** | **23%** |